՛հ՛» ձայնը, միախառնելով թռչունների երեկոյեան երգեցողութեան հետ, մի առանձին կենդանութիւն էին տալիս շրջակայքին: Նրանք զանազան բանջարներ էին քաղում, այն բանջարները, որ մեր կողմերում վաղուց արդէն քաղել ու չորացրել էին ձմեռոայ համար:

Մեր հանդէպ՝ սարի կուրծքի վրայ՝ կպած էր մի գիւղ, որ իր գեղեցկադիր բարձրութիւնից նայում էր դէպի ծովը: Այդ գիւղը, կարծես, կտրուած լինէր Ռշտունեաց աշխարհից, ապրում էր իր լռիկ, մնջիկ առանձնութեան մէջ, հրճւում էր ծովի ալիքներով, շնչում էր իր լեռների թարմ, հովասուն օդը եւ վայելում էր իր շրջակայքի բարիքները, որ այնքան շռայլութեամբ պարգեւել էր առատաձեռն բնութիւնը: Մենք դիմում էինք դէպի այդ գիւղը:

Արեւը մտնելու վրայ էր: Նրա պայծառ ճառագայթները մի առանձին փայլ էին ստանում, շողշողալով ծառերի լայն, հիւթալի տերեւների վրայ: Ինձ թւում էր, որ ամբողջ շրջակայքը ծփում էր, թրթռում էր մի սքանչելի ոսկեզօծութեան մէջ: Ոսկեզօծ էին երեւում կարմիր հարսներն ու աղջիկները, որ պտտւում էին մարգերի մէջ, ոսկեզօծ էին երեւում ձիերն ու կովերը, որ ներքեւում արածում էին արօտների մէջ, ոսկեզօծ էին երեւում այծերն ու ոչխարները, որ վերեւում թռչկոտում էին մի ժայռից դէպի միւսը, ոսկեզօծ էին երեւում շինականները, որ, երկար գերանդիները ուսներին դրած, վերադառնում էին խոտհունձից. ոսկեզօծ էր երեւում գիւղական փոքրիկ եկեղեցու գմբէթը, որ իշխում էր միւս շէնքերի վրայ, ոսկեզօծ էր երեւում եւ ծիրանի ծովը, որ ծաւալւում էր հեռու ու հեռու եւ ապա միախառնւում էր նոյնպէս ոսկեզօծ երկնքի հետ: Ես առաջին անգամն էի տեսնում, թէ որպիսի՛ հրաշալի պատկեր է նկարում արեւի երեկոյեան վերջալոյսը, երբ նա իր արարչագործ վրձինի տակ ունի ընդարձակ ջուր, պարզ երկինք, կանաչազարդ դաշտավայր եւ գեղեցիկ լեռներ՝ ալիքաւոր, գեղագրական բարձրութիւններով:

Արեւը մտաւ, եւ կախարդական պատկերը սկսեց փոքր առ փոքր անհետանալ մեր աչքերից: Մի քանի պատառ ձիւնագոյն ամպեր միայն պահպանել էին իրանց վրայ սքանչելի ոսկեզօծութիւնը՝ այն եւս եղծոեցաւ, եւ մոխրագոյն մռայլը տիրեց ամէն տեղ:

Ես նայեցի Ասլանի երեսին. նրա դէմքը նոյնպէս մռայլուած էր: Ի՞նչ էր մտածում նա՝ ես չգիտեմ: Բայց ես մտածում էի, ինչո՞ւ այդ բոլորը, որ այդքան գեղեցիկ է, որ այդքան հիանալի է, ուր ամէն արարած այդքան ուրախ է, այդքան զարթ է, ուր ամէն ինչ ժպտում է, ծիծաղում է, միայն մա՛րդը՝ բոլորի տէրն ու իշխանը, չէ կարող վայելել մշտատեւ ուրախութիւն, չէ կարող կատարելապէս երջանիկ լինել: